ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պարուսույցի թափուր տեղի մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.155 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի պարուսույցի (0,75 դրույք) թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

- դիմում (Ձև 1)
- կրթություն մասին փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 4)
- մեկ լուսանկար 3×4 չափի
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել փաստաթղթերի ցանկը: Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 28-ը, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2023թ. նոյեմբերի 30-ին՝ ժամը 12:00-ին, «Երևանի հ.155 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան,

Վահե Վահյան 1: Տեղեկությունների համար զանգահարել 010 28-78-80 հեռախոսահամարով:
Կատարող Ն.Ստեփանյան հեռ.՝ /011-51-88-41/: